Խ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐ

ԱՂԱՒՆԻ

ՑԱՒՆԵՐԾԱՑՈՂ ՀԱՅՐԵՆԻՔ

Քո յաւերժն մէջ, որ տեւում է յար,
Կեանքս կարճատեւ ակընթարթ է լոկ.
Քո յաւերժն իմ մէջ կըբելու համար,
Ես ի՞նչքան լինեմ ներհուն ու խելօք:

Դու մեծ, դու հարուստ, մայրերի դու մայր,
Միշտ երկունքի մէջ ու միշտ նորածին,
Քո մի վայրկեանը ինձ տալու համար,
Ինչո՞վ հատուցեմ քո պարգեւակին,

Եւ ի՞նչքան տքնեմ, մաքառեմ ի՞նչքան,
Որ հոգիս քեզ տաց գանձերն իր բոլոր,
Ցոյզերն իր ամէն, սէրերն իրական,
Եւ ինքը ապրի սուրբ հըրճուանքը մօր:

Արդ վառիր դու ինձ տարերքովըս մեծ,
Լըցրու քեզանով աշխարհն իմ հոգու,
Որ կեանքս դառնայ երգ մի նորաստեղծ,
Ինչքան ամէն մի ակընթարթը քո: ●

ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ

Հայրենի հողը սիրուն է մայրիկիս,
Սիրուն է մայրիկիս, թող կանաչ մընայ.
Վիշտն անազորոյն, կորուստ ու կըսկիծ
Մայր հողի սըրտին անճանաչ մընայ:

Թէ որ մայր դառնամ ու բախտը մի օր
Մայրական սըրտիս իր վէրքը բանայ,
Հայրենի հողը թող ծաղկի անդորը,
Որ սիրտս վիշտն իր յաղթի, մոռանայ:

●

ՍԱՐՄԷՆ

ՍԻՐՈՒԻՆ ԱՂՋԻԿ

Սիրուն աղջիկ, մօտ բեր սինին,
Վըրան՝ Հայոց նըրան դինին,
Թող ցընծութիւնը ծով դառնայ.
Մեր սըրտերում, մեր սեղանին.

Վառենք աստղերը երկրային,
Հըպարտ նայենք ապագային,
Նըրա դիմաց կը տժգունին
Աշխարհները հէքեաթային:

Թէ այդ օրուան մենք չըհասանենք,
Թրքի մահուան դանակը նենգ,
Թող մեր հոգին՝ այդ նոր կեանքի
Գովքը անի որպէս մի երգ:

Թէ դու հասնես այդ լոյս օրուան,
Աճիւնըս տար մեր ազատ Վան,
Թող հայրենի ծաղիկներին
Ջուր տայ իմ սիրտը՝ շատրւան...

Սիրուն աղջիկ, մօտ բեր սինին,
Վըրան՝ Հայոց կարմիր դինին,
Խըմենք սիրով ու միշտ փառք տանք
Հերոսամայր Հայաստանին:

ԽՆԴՈՒԹԵԱՆ ԵՐԳ

Ո՛վ Հայուհի դալարիրան,
Դաժան օրերն անդարձ կորան,
Սեղանը բա՛ց, դինին վըրան,
Թասերը լի՛ց բերնեբերան:

Հայոց ազատ
Արեւի տակ
Խըմե՛նք, խընդանք,
Կեանքին փառք տանք:

Դու, սեւաչեայ իմ սըրտակից,
Մեր չէն ու նոր օճախներից
Կանչիր թող դան դուռ ու դըրկից,
Քո նուրբ ձեռքով թասերը լից:

Հայոց ազատ
Արեւի տակ
Խըմենք, խընդանք,
Կեանքին փառք տանք:

Մեր պապերի հոգին արդար,
Հազար տարուայ տենչն անկատար
Պահեց անչէջ ու անվրթար...
Հիմայ ծիծղուն բաժակդ առ:

Հայոց ազատ
Արեւի տակ
Խըմենք, խընդանք,
Կեանքին փառք տանք:

digitised by A.R.A.R.@